# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

## ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Թափօրը Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի գլխաւորութեամբ և մի քանի տասնեակ հազար ժողովրդի ուղեկցութեամբ վանքի աւ. եկեղեցուց մինչև Ներսիսեան նոր դպրոցի մուտքը հանդիսաւոր քայլելով կէսօրուայ $1^{1}/_{2}$ ժամին հասաւ Ներսիսեան դպրոցի նոր շէնքին, որի մուտքի մօտ եկեղեցական դասը կատարեց նոր ուսումնարանի օրհնութեան հանդէսը և ապա հրաւիրուած ժողովուրդը մուտ գործեց դպրոցի ընդարձակ դահլիճը։

Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութիւնը ընդհանրապէս դպրոցի ամբողջ շէնքը և մանաւանդ նրա հոյակապ դահլիճը զարդարել էր ամենաշքեղ և հանդիսին վայելուչ կերպով։

2 ժամին մօտ սկսեցին հաւաքուել հրաւիրուած օտարազգի հիւրերը, որոնց ընդունում էին դպրոցի վերատեսուչն ու տեսուչը և Հոգաբարձուները։

Ճիշտ 2 ժամին եկաւ Կովկասի փոխարքայի օգնական գեներալ Շատիլովը իր ամուսնու հետ, որին մատուցեց ծաղկեփունջ, և փոխարքայի օգնական սենատոր Վատացին։

Շուտով դահլիճը լցուեց հրաւիրեալներով, որոնց մէջ աչքի էին ընկնում անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ բարոն Ֆոն-դեր-Ռոպպ և նրա օգնական Նիկ. Ս. Զուրաբով, Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի ներկայացուցիչ Ալեք. Իւ. Սլաւինսկի, փոխարքայի խորհրդի անդամ Նիկոլայ Ֆեդ. Զուևկովսկի, փոխարքայի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր իշխան Պ. Ա. Դրուցլինսկի, ոստիկանապետ գեներալ Ֆ. Ա. Զասիպկին, Թիֆլիզի նահանգի ազնուականների պետ իշխան Կ. Ն. Աբխազի, ներկայացուցիչ հայ կաթոլիկների առաջնորդի Դիոնեսիոս վ. Գաղատեան, մուֆտի Հուսէյն էֆէնտի Գայիբով, Շէյխուլիսլամի պաշտօնակատար Ախունդ Մահմէդ Ախունդ Ալի օղլի Փիշնամազզադէ, Թիֆլիսի հրէից րաբբի Մարկուս, վրաց պատմական և ազգագրական ընկերութեան նախագահ Էֆիմի Սիմէօնովիչ Տակայիշվիլի, վրաց «Գանաթլէբա» ընկերութեան նախագահ իշխ. Անաստ. Թումանեան Ծերեթելի, Թիֆլիսի յունաց դրամատիկ ակումբի նախագահ Բաստիանով, քաղաքագլուխ Ալ. Ի. Խատիսեան, ամբողջ քաղաքային վարչութիւնը, մեշչանների աւագ Բարսեղ Առաքելեան իր դեպուտատներով, արհեստաւորների աւագ Բարսեղով, պետական դպրոցների շրջանային տեսուչ Սերգէյ Ս. Լարիոնով, Թիֆլիսի գիմնազիաների դիրեկտորներ և նաչալնիցաներ, ս. Նունէի զաւեդենիայի տեսուչուհի իշխ. Ռուստամով Դ. Մելիքովա, կանանց բարձր կուրսերի պրոֆ. Ֆէդորով, Բլագովիդով. վրաց ազն. գիմնազիայի դիրեկտոր Ալեք. Մղիւանի, Կովկասեան գիւղարհեստը խրախուսող ընկերութեան նախագահ Կոստ. Մ. Ալիխանեան, ռուս, վրաց, թուրք մամուլի ներկայացուցիչները, Թիֆլիսի բոլոր հայկական դպրոցական և կուլտուրական հաստատութիւնները իրենց ամբողջ վարչական կազմերով։

Հանդէսը բաց արեց Թիֆլիսի Թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը մի ընդարձակ ճառով։

Տօնի մասին ընդհանուր խօսք ասելուց յետոյ առաջնորդը շեշտեց այն կարևոր դերը, որ այդ երկու մեծ անձնաւորութիւնները—Սահակ և Մեսրոպ—տառերի գիւտով կատարել են թէ հայերի և թէ եւրոպական արևմտեան քաղաքակրթութեան համար։ Հայաստանը այն երկիրն էր, որ գտնւելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծի վրայ, այդ մեծ աշխարհների պատերազմական և մտաւորական շարժումների սահմանագիծն էր կազմում. Ասիայի և Արևմտքի ազգերը փոխադարձ յարձակումների և աշխարհակալութիւնների ժամանակ այդ երկրի վրայով էին անցնում կրօնական մեծ աշխարհայեցողութիւնները նոյնպէս այդ սահմաններումն էին իրենց մրցման ասպարէզը գտնում. հայերը իբրև Ասիայում ապրող և ասիական ժողովուրդներով շրջապատուած մի ցեղ, հակառակ իրենց աշխարհագրական դիրքի, յարեցին արևմտեան կուլտուրային և ընդ միշտ հաւատարիմ մնացին այդ կուլտուրային։ Ս. Սահակն ու Մեսրոպն էին, որ այդ դիմացկունութեան հիմնաքարերը դրին։ Լուսաւորչի օրով քարոզւած քրիստոնէութիւնը ինքնըստինքեան չէր կարող այնքան խոր արմատ ձգել հայերի մէջ, որ այդ ժողովուրդը իր փոքրութեամբ, իր աշխարհագրական աննպաստ պայմաններում դիմադրէր արևելքից տեղացող ծանր հարուածներին։ Հարկաւոր էր բարոյական ոյժ, և հայերն այդ ստացան ս. Մեսրոպի գիւտով և ս. Գրքի թարգմանութեամբ. այդ մտաւոր աշխատանքը, որ ունեցաւ իր ոգևորութեան և ծաղկման շրջանը հէնց հեղինակների կենդանութեամբ, առաջ բերելով հայկական գրականութեան ոսկէ V դարը, ունեցաւ իր յարատևութիւնը նաև հետևեալ դարերում, և արտայայտեց ոչ միայն գրականութեան, այլ և քրիստոնէական ճարտարապետութեան և քրիստոնէական արւեստի միջոցով. Կուլտուրայի միջոցով յարաբերութիւն պահպանելու ձգտումը Արևմուտքի հետ այնքան զօրեղ էր հայերի մէջ, որ նա արտայայտւում է նոյն իսկ բացառիկ դժւար պայմանների մէջ, որի օրինակ կարող է ծառայել պատմական մի դէպք. 17-րդ դարի սկզբներում Շահ-Աբբաս պարսիկ աշխարհակալը ամայացնելով Հայաստանը՝ ժողովրդին տանում բնակեցնում է Սպահանի մօտ, կտրելով նրան բուն երկրից և արևմտեան քաղաքակրթական երկրներից։ Հայ գաղթականութիւնը կղզիացած մահմեդական աշխարհով և ասիայի ժողովուրդներով, կարողանում է Հնդկաստանի վրայով ամբողջ Աֆրիկայի շուրջը պտոյտներ անել, հասնել Եւրոպա, այնտեղ տպագրութեան արւեստը ծաղկեցնել և նոյն ճանապարհով բուն հայրենիքը մասնակից դարձնել տպագրութեան նոր գիւտին՝ եւրոպական այդ մեծ բարիքին։

Այդպէս վառ պահպանելով Եւրոպայի՝ նոր մտքով, իսկ հին մտքով Յունաստանի և Հռոմի հետ յարաբերութիւնը, և Ասիայի կրօնական և աշխարհագրական շփման սահմանագծի վրայ մնալով՝ հայերը առաջին հարւածներն էին ընդունում և հետևեալ շարժումները դէպի Եւրոպա թուլացնում։ Հայերը դարերի ընթացքում Եւրոպայի կուլտուրայի համար առաջապահ գնդեր հանդիսացան և կարողացան իրենց պատմական դերը պատւով կատարել. այդ դերն է, որ իրաւունք է տալիս հայերին իրենց համարել եւրոպական քաղաքակրթութեան անբաժան ընկերներ և այդ դերն է որ այսօր մեզ իրաւունք է տալիս հայ եկեղեցում յիշատակւող երկու սրբերին՝ համարել ոչ միայն հայութեան, այլ և Արևմտեան կուլտուրայի յայտնի բարերարների շարքը։

Այնուհետև առաջնորդը շեշտեց, որ այսօրուայ այս շքեղ հանդէսի համար մենք պարտական ենք ռուսաց Կայսեր խնամածութեան և հրաւիրեց բոլոր հանդիսականներին աղօթքներ վերառաքել առ Աստուած Նորին Կ. Մ. և Օգոստափառ Ընտանիքի կեանքի և առողջութեան համար, որ և ժողովուրդը ընդունեց ցնծագին կեցցէներով. այստեղ Ներս. դպրոցի խումբը երգեց կայսերական օրհներգը «Боже, царя храни», որ ժողովրդի պահանջով կրկնւեց 3 անգամ։

Այնուհետև բեմ բարձրացաւ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ պ. Ստեփան Լիսիցեանը և մի ակադեմիական ճառ կարդաց հայոց գրի գիւտի և տպագրութեան մասին ռուսերէն լեզւով օտարազգի հիւրերի համար, որ տևեց կէս ժամ։ Դահլիճը լցւեց ծափահարութիւններով։

Ապա Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը քառաձայն երգեց Թարգմանչաց շարականը։

Այնուհետև Թիֆլիզի քաղաքագլուխ պ. Ալեքս. Խատիսեանը մի ճառով Թիֆլիս քաղաքի կողմից շնորհաւորեց նշանաւոր յոբելեանը, արտայայտելով այն միտքը, որ հայերը դարերի ընթացքում հրից ու սրից անցնելով պահպանեցին իրանց գոյութիւնը շնորհիւ Մեսրոպի մեծ գիւտի՝ Հայոց տառերի ընդհանրացման և Հայկական տպագրութեան։ Հասարակութիւնը ծափահարութիւններով ընդունեց քաղաքի ներկայացուցչի շնորհաւորականը։

Հետևեալ ճառախօսը՝ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխան Աւխլաւին էր, որ իր գեղեցիկ ճառով շեշտեց հայերի և վրացիների սերտ միութեան կարևորութիւնը քաղաքական ասպարէզում։

Նրա ճառը ծածկւեց անվերջ ծափահարութիւններով։

Բանաստեղծ Յովհաննէս Թումանեանը կարդաց տօնին նւիրւած իր հետևեալ սրտաբուղխ բանաստեղծութիւնը Հայ Գրողների ընկերութեան կողմից և իջաւ ամբիոնից ծափահարութեանց տարափի տակ։

Թէպէտև բախտը մեզ շատ հարւածեց
Երկար դարերով, անհեղ հարւածով,
Թէպէտև էսպէս ցրւեց, տարածեց,
Ջրգեց հողէհող, փլեց ծովէծով,

Վրկայ է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարեվէր ապրում ենք կրկին,
Եւ ուր հասնում է հայի գիրքն ու գիր—
Կենդանի է դեռ Հայութեան ոգին։

Եւ Թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ
Առաջ են խաղում լուսաւոր տենչով,
Եւ Թնդում են դեռ հայի երգն ու տաղ
Հարազատ լեզւով, հայրենի շընչով։

Եւ իր փլատակ աւերների տակից
Ելնում է ահա հզօր ժողովուրդ,
Իր վեհ ճակատին տանջանք ու Թախիծ,
Խորունկ հայեացքում մեծ կեանքի խորհուրդ։

Ո՜վ դուք սրբազան Մասիս, Արագած,
Էդ ձեր երկնամուխ գոհար Թագերով,
Եւ, որ նրանցից վերև խոյացած
Փայլատակում էք լոյս—պսակներով—

Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,
Որ լեցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր
Լուսաւոր կեանքի սիրով եռջանիկ
Ու ձգտում ուրիք — ձգտել դէպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կը մնաք,
Հոյակապ սիւներ Հայութեան ոգու,
Մենք միշտ անսասան առաջ ենք գնանք,
Ինչքան մեր ճամբան լինի ահարկու։

Եւ տօն կը տօնենք էսպէս խնդագին,
Եւ Թող իմանայ բովանդակ երկիր—
Ապրում է անմեռ Հայութիւնը հին,
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր։

Ապա սկսւեցան շնորհաւորանքներ.

Բարեգործ. Ընկ. խորհրդի նախագահ պ. Սամսոն Յարութիւնեանը շնորհաւորելով Բարեգ. Ընկ. կողմից միաժամանակ կարդաց Թիֆլիսի նահանգապետի և Կովկասի ուսումնական շրջանի Հոգաբարձուի յանուն Մեսրոպ սրբազանի տւած շնորհաւորական հեռագիրները։

Եւ ապա կէս ժամւայ ընդմիջում յայտարարելով՝ Մեսրոպ եպիսկոպոսը բոլոր օտարազգի հիւրերին հրաւիրեց առանձին դահլիճ, ուր մատուցեց նրանց Թէյ և նախաճաշ։

Դպրոցի երկայն հաշտում դպրոցի Հոգաբարձութիւնը 600 հոգու համար պատրաստել էր պատւի սեղան, ուր հիւրասիրւեցան բոլոր հրաւիրեալները, որից յետ վերսկսւեց յոբելեանական հանդէսը շնորհաւորութիւններով։

Հետզհետէ բեմ բարձրանալով՝ շնորհաւորական խօսքեր արտասանեցին հետևեալները.—

«Նակադուլի» ամսագրի կողմից՝ իր խմբագիրը—վրացերէն լեզւով։

Մեշչանների վարչութիւնից՝ աւագ պ. Բարսեղ Առաքելեանը։

Ուսուցչուհիների ընկ. կողմից.—տիկ. Լիսիցեան։

Աւետրական 2-րդ ուսումն.—ուս. Ս. Բամալեան։

Կանանց Բարեգործ. ընկ.—տիկ. Յարութիւնեան։

Հայ երաժշտ. ընկ.—Պ. Յովհաննիսեան։

Հրէյից համայնքից.—Ռաբբի։

Աւետրակ. 2-րդ դպրոցի հոգաբարձ.—Ա. Յովհաննիսեան։

Հայ կաթոլիկ համայն.—Դիոնեսիոս Վ. Գաղատեան։

Ժողովրդական տան հայ. դրամ. խմբակցութ.—Յ. Տէր-Գրիգորեան։

Կանանց բարձրագ. դասընթ. ուսանողուհիների կողմից.—Օր. Ա. Տիգրանեան։

Կ. Հ. Հրատ. ընկ.—Բժ. Զարգարեան։

Ժողովրդական համալսար.—Գ. Ղազարեան։

Ուսուցչական միութ.—Եղիբէգեան։

«Հորիզոնի» խմբագ.—Ա. Ղազարեան։

«Մշակի» խմբ.—Յ. Սպենդիարեան։

«Նոր-Հոսանքի» խմբագ.—Ն. Աղբալեան։

Թիֆլիսի կանանց կողմից.—Տիկ. Դանիէլ-բէգ։

Թիֆլիսի փաստաբ.—Յ. Ղորղանեան։

Հայ որբախնամ ընկ. — Տիկ. Պետրոսեան։

Հայ ուսանող.—Ար. Մեհրաբեան։

Մէջընդմէջ երգում էին Ներսիսեան, Յովնանեան և Գայիանեան ուսումնարանների երգեցիկ խմբերը։

$5^{1}/_{2}$ ժամին հանդէսը փակեց ս. առաջնորդը։ Ժողովուրդը ցրւեց հիացման տպաւորութեան տակ։

Բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներից և նամակներից քաղւածքներ կը տանք յաջորդ անգամ։

## ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թիֆլիսի քաղաքագլուխը Կաթողիկոսից հետևեալ հեռագիր-պատասխանն է ստացել.

«Շնորհակալ եմ յոբելեանի առթիւ ձեր շնորհաւորականների և բարեմաղթութիւնների համար։ Օրհնում եմ ձեզ և քաղ. դումայի բոլոր անդամներին»։

—

Էջմիածնի յոբելեանական հանդէսներին ներկայ լինելու համար Աղթամարի կաթողիկոսութեան ներկայացուցիչ էր նշանակւած Ա. Վռամեան։

—

Երկուշաբթի, հոկտեմբերի 4-ին, Թիֆլիսի ժողովարանում յոբելեանի առթիւ կազմակերպւած էր բանկէտ, որին մասնակցում էին մօտ 150 հոգի, ժամի մօտ 3-ին եկաւ Թեմիս առաջնորդ Մեսրոպ եպ. Աշոտ եպ. ուղեկցութեամբ։ Նւագախումբը նւագեց զէյթունցոց քայլերգը։ Ճաշի ժամանակ առաջարկւեցին Թագաւոր Կայսրի, Կաթողիկոսի և Փոխարքայի կենացները։

—

Բանաստեղծ Յովհ. Թումանեանը մի գեղեցիկ ճառ խօսեց հայ գրողների ողբալի վիճակի, հայ ուսուցչի աննախանձելի դրութեան մասին և ցանկութիւն յայտնեց, որ հայ դպրոցը ծաղկի, կանոնաւորւի, որով մենք աւելի արագ քայլերով կընթանանք կուլտուրական յառաջադիմութեան ճանապարհով. Ն. Աղբալեանը խօսեց մամուլի նշանակութեան մասին հայկական կեանքում։ Շիրվանզադէն խմեց հայ ժողովրդի կենացը։ Եղան ուրիշ շատ բաժակաճառեր։ Մէջ ընդ մէջ նւագում էր նւագախումբը։ Բանկէտը վերջացաւ մօտ ժամը 6-ին։

## ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

### ԲԱԹՈՒՄ

Երէկ, ամսիս 13-ին, Շմաեսկու ընդարձակ Թատրոնում Բաթումի հայ հաստատութիւնների նախձեռնութեամբ մեծ շուքով տօնեցին հայ տառերի գիւտի 1500 ամեայ և հայ տպագրութեան 400 ամեայ միացեալ Յոբելեանները հետևեալ ծրագրով.

ա) Հայոց եկեղեցում տեղի ունեցաւ պատարագ, մաղթանք. քարոզ խօսեց Մ. աւ. ք. Մելեանը։

բ) Հանդիսաւոր երթ եկեղեցուց դէպի Թատրոնը։

գ) Գրական-երաժշտական ցերեկոյթ հետևեալ բաժիններով. 1) Боже, Царя, Храни — նւագեց զինւորական երաժշտախումբը, 2) Մեր հայրենիք—քառաձ. խումբը, 3) Հանդէսի նշանակութիւնը ռուսերէն լեզւով—պ. Բ. Դանիէլեան*), 4) Հայ քաղաքակրթութիւնը մինչև տառերի գիւտը—բանախօս. պ. Յ. Մեղաւորեանի։ 5—6) «Անուշ» օպերայից կտորներ I և II մաս-խումբը, 7) Հայ գրերի գիւտը—բանախօս. պ. Վ. Տէր-Աբրահամեանի, 8) «Կուժն առայ»—խումբը, 9) Հայ տպագրութիւնը—բանախօս. պ. Ս. Մկրտչեան, 10) «Հանդումը մնաց»—խումբը, 11) «Մայրենի լեզու»—ոտան. N. N., 12) «Տրալալա»—խումբը, 13) Մոգական լապտերով ցոյց տուեց Հայ գրական վաստակաւորների պատկերները։

Թատրոնում հանդէսը սկսւեց ժամը 12-ից։ Մուտքը ձրի էր։ Հաւաքւել էր անհագին բազմութիւն։ Ընդարձակ Թատրոնը ծայրէ ծայր լցւած էր։ Նեղսը այլ ևս տեղ չլինելու պատճառով շատերը յետ դարձան կամ դըրսում սպասեցին։

Հանդէսը պատւել էին իրենց ներկայութեամբ նահանգապետը և այլ բարձրաստիճան զինւորական անձինք, նոյնպէս քաղաքագլուխ իշխ. Անդրոնիկովը և քաղաքային վարչութեան անդամները։ Ներկայ էին նաև բաւականին օտարազգիներ։ Եկած էր քաղաքիս բոլոր դպրոցների հայ աշակերտութիւնը իրենց դաստիարակների առաջնորդութեամբ. սրանք սկզբում հաւաքւել էին հայոց ծխական դպրոցում, ապա այդտեղից հոգաբարձութեան կազմի հետ միասին հանդիսաւոր կերպով եկան հայոց եկեղեցին և այդտեղից բազմութեան հետ միասին՝ դէպի Թատրոն։

Ծրագրի բոլոր համարները ըստ կարգին կատարւեցին։ Բանախօսները տօնի պատշած ճառեր արտասանեցին։ Խմբական երգերը կառավարում էր հայոց դպրոցի ուսուցիչ պ. Վ. Բունիաթեան։

Հանդէսի սկզբում հոգաբարձութեան անդամ պ. Ա. Վերմիշեան ռուսերէն լեզւով մի քանի խօսքով շեշտեց օրւայ տօնի նշանակութիւնը, ապա ողջունեց և շնորհակալութիւն յայտնեց ներկայ եղող բոլոր հիւրերին։

Քաղաքագլուխ իշխ. Անդրոնիկովը ողջոյնի ճառ արտասանեց քաղաքային ինքնավարութեան կողմից։

Նոյնպէս ողջոյնի ճառ արտասանեց վրաց ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածող Բաթումի ճիւղի վարչութեան անունից պ. Մղիւանի։

Հանդէսի վերջում հոգաբարձութեան նախագահ պ. Աշոտ Մնդոյեան մի քանի ջերմ խօսքով դրւատելով համազգային մեծ տօնի նշանակութիւնը, ասաց, որ Թող սրա նման կուլտուրական տօները աւելի ոգևորեն հայ ցեղին և Թող այս տօները աւելի նըցուկ հանդիսանան մայրենի լեզւի ամրապնդման և զարգացման։ Պ. Մընդոյեան միաժամանակ, առիթից օգտւելով, հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրեց դէպի հայոց ծխական դպրոցը, ասաց որ մօտիկ ժամանակներս տօնելու է դպրոցի գոյութեան 25-ամեակը, յոյս տածեց, որ դարձեալ այսպիսի հոծ բազմութեամբ և ջերմագին վերաբերմունքով կը տօնւի և այն։

Բոլոր դասախօսները, ճառախօսները և երգեցիկ խումբը վարձատրւեցին բուռն ծափահարութիւններով։

Հանդէսը վերջացաւ ժամը 3-ից անց։

Amiko

## ՅՈԲԵԼԵԱՆԸ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

Պոլիս, 15 հոկտ.—Ազգապալատում հետևեալ միջադէպը տեղի ունեցաւ։ Հայ գրերի գիւտի յոբելեանի առթիւ հայերը հաւաքւել էին բացօթեայ։ Մի քանի հոգի սկսեցին խօսել։ Թուրք զինւորական պահակը առաջարկեց հաւաքւածներին ցրւել պատերազմական դրութեան պատճառով։ Հայերը ընդդիմացան։ Հետևանքը այն եղաւ, որ մի զինւոր սպանւեց, մի քանի զինւորներ և ոստիկաններ թեթև վիրաւորւեցին։ Հայոց պատրիարքը և մեծամեծները ցաւակցութիւն յայտնեցին իշխանութեանը։ Միջադէպը հարթւած է։ (Պ. Հ. Գ.)

## ԻՄ ԲԱՂՁԱՆՔԸ ՄԵԾ ՏՕՆԻՆ

Հայ գրի կանթեղը միշտ վառ լինի լիզուն խօսուն, գրիչը շարժուն։

Հայ տպագրութեան տօնը մի մուրճ լինի՝ խլացած ականջները բացխելու և քարացած սրտերում ընթերցանութեան սէր սփռելու։

Հայ դպրոցի, հայ ընտանիքի կամարների տակ, հայ մարդու, հայ մանկան բերաններում հայ գիրն ու խօսքը յաւիտեան հնչի։

Եւ ամենքս ասենք՝ ամէն։

Միտասր

---

*) Գ. Դանիէլեանի հիւանդութեան պատճառով նրա կազմած ռեֆերատը կարդաց պ. Ա. Վերմիշեանը։ Ա.